ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳՐԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Վեհափառի վախճանման առթիվ կվերահաստատենք Մեր և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հանձնառությունը՝ որպես լծակից ու գործակից ամբողջականորեն զորավիգ կանգնելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնին իր եկեղեցաներ ու հայրենաներ առաքելության մեջ:

Կաղոթենք առ Ամենաբարին Աստված, որ ամուր և անսասան պահե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Թող Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին հիշատակը միշտ պայծառ մնա մեր հայրենիքին և ողջ հայության կյանքին մեջ:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ամբողջ Միաբանությունը և հայ հասարակությունը խորապես կողբա անդարմանելի կորուստը մեր հոգևոր Հոր՝ Նորին Ս. Օծություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետին և Կաթողիկոսին: Կաղոթենք, որ Տերն անսասան պահե Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին իր հոգևոր պաշտոնյաներով և ժողովուրդով:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Կ.ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԻՑ

Այսօր, երեկոյան ժամը 18.10-ին, սրտի խոր ցավով լսեցինք Ամենայն Հայոց Հայրապետին և Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի վախճանումի գույժը: Այդ պահին Կ. Պոլսո Հայոց Պատրիարք Ամենա-